ղեցիների մնացորդներով: Տարաբաղդաբար այս յուշարձանի լուսաւոր նեգատիւներից արտատպութիւն չունինք, ստիպուած ենք բաւականանալ ձեռքի տակ եղած անյաջող լուսանկարներից:

baldachin), կրկնւում է յաճախ կոպտական արուեստի մէջ:* Ապա գլխին լաչակ եւ չուրջը լուսոյ պսակ: Օձիքը զարդարուն, ուսերին թիկնոց, որ իջնում է մինչեւ ոլոքները, հորիզոնական ծալքե-



Պատկ. 96

Առաջին երեսը Աստուածածնի քանդակն ընդունելով (Պատկ. 94), հետզհետէ կ'անցնենք միւս երեսների նկարագրութեան եւ գնահատութեան: Նա նստած է աթոռի վերայ, ոտքերի տակ քառանկիւնի պատուանդան կամ աթոռակ չորս ոտներով: Գլխից վերեւը ճառագայթաձեւ մի հովանոց (Muschel-րով, ինչպէս տեսանք Աստուածածնի ուրիշ քանդակների վերայ (Պատկեր 79): Դորա տակից երեւում են աւելի եր-

---

*Strzygowski. Die Koptische Kunst. p. 37. Պատկ. 44: 7293: Համարում է Ե.–Զ. դարի գործ: